ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2015- 16.07/356
16.07.2015թ.

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ
Վ. Շահինյանին

Հարգելի պարոն Շահինյան,

2015 թվականի հուլիսի 13-ին իր որդու՝ Հովհաննես Արթուրի Մոսյանի իրավունքների պաշտպանության խնդրով կազմակերպություն է դիմել Գոհար Սամվելի Մոսյանը: Վերջինս, կազմակերպությանն ուղղված դիմումում հայտնել է, որ զինծառայությունից խուսափելու հիմքով Հ. Մոսյանի նկատմամբ հարուցվել է քրեական գործ, որի նախաքննությունն իրականացվում է ՀՀ քննչական կոմիտեի ՋՔԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնում, գործը վարել է քննիչ Ս. Վարանցովյանը:

Ըստ Գ. Մոսյանի դիմումի՝ նախաքննության ընթացքում խախտվել են իր որդու՝ մի շարք իրավունքները: Մասնավորապես, ըստ Գ. Մոսյանի, իր որդու նկատմամբ անհիմն հայտարարվել է հետախուզում, քննիչը բղավելով, վախեցնելով ստիպել է գրավոր հրաժարվել պաշտպան ունենալու իրավունքից, ճնշում գործադրելով, ստիպել է Հ. Մոսյանին իր թելադրանքով ցուցմունք գրել՝ վերջում ստիպելով ավելացնել, որ գրված է Հ. Մոսյանի բառերով և ճիշտ է: Բացի այդ, Գ. Մոսյանն իր դիմումում հայտնել է նաև, որ Հ. Մոսյանն անհիմն կալանավորվել է և ազատ արձակվել միայն 72 ժամ անց, որի պատճառն, ըստ ներկայացված դիմումի, քննիչի կողմից դատախազություն պատշաճ կարգով Հ. Մոսյանի բացատրությունը չի ներկայացվել, որտեղ նա հայտնել է իր առողջական խնդիրների մասին: Ընդ որում, ըստ դիմումում հայտնած տվյալների, Հ. Մոսյանը միշտ եղել է տանը, հեռախոսահամարը, որն իմացել է նաև քննիչ Ս. Վարանցովյանը, եղել է հասանելի:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»:

ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածը սահմանում է, որ «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից», իսկ 17-րդ հոդվածը նախատեսում է խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկվելու արգելքը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը սահմանում է, որ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածը հստակ նախատեսում է, որ մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Սույն հոդվածի կարգավորումները բխում են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի բովանդակությունից:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածը նախատեսում է յուրաքանչյուր անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները:

Ոչ ոք չի կարող քրեական գործով ձերբակալվել, խուզարկվել, կալանավորվել, դատապարտվել, ենթարկվել բերման և դատավարական հարկադրանքի այլ միջոցների, ինչպես նաև իրավունքների ու ազատությունների այլ սահմանափակումների այլ կերպ, քան օրենքով սահմանված հիմքերով և կարգով»:

Սույն օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելը պարտադիր է քրեական դատավարությանը մասնակցող բոլոր մարմինների և անձանց համար», իսկ ըստ 3-դր մասի՝ «Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, պահվի ստորացուցիչ պայմաններում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածը մեկ անգամ ևս ամրագրում է անձի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, սահմանելով, որ «Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով»: Բացի այդ, սույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է

կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով»:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով Ձեր լիազորություններով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթներով՝ դիմում եմ Ձեզ՝ պահանջելով միջոցներ ձեռնարկել դեպքի առթիվ քրեական գործ հարուցելու, մեղավոր անձանց հայտնաբերելու և Հովհաննես Մոսյանի խախտված իրավունքները վերականգնելու ուղղությամբ:

Կից ներկայացնում եմ Գ. Մոսյանի՝ կազմակերպությանն ուղղված դիմումի պատճենը:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Տ. Սիրադեղյան
tsiradeghyan@hcav.am